

## ԿԱՐԾԻՔ

Ը.00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Անուշ Լավրենտի Թումանյանի՝ «Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի տնտեսամաթեմատիկական ցուցանիշների գնահատումը (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

### *Ատենախոսության թեմայի արդիականությունը*

Պատշաճ առողջապահական ծառայությունների ապահովումը առանցքային տեղ է զբաղեցնում ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում: Հենց առողջապահության ոլորտի արդյունավետ գործունեությունից է մեծապես կախված բնակչության առողջության մակարդակը, ինչն էլ իր հերթին ուղղակիորեն անդրադառնում է աշխատուժի արտադրողականության, հետևաբար նաև տնտեսական զարգացման վրա:

Առողջապահական համակարգի բնականոն գործունեությունն անմիջականորեն կախված է դրա ֆինանսական հզորությունից՝ առաջ քաշելով ֆինանսավորման աղբյուրների օպտիմալ կառուցվածքի մշակման պահանջ: Այդ աղբյուրների ցանկում առանցքային տեղ է զբաղեցնում պարտադիր բժշկական ապահովագրությունը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այն զգալիորեն մեծացնում է առողջապահական ծառայությունների հասանելիությունը և որակը՝ լուրջ խթան հանդիսանալով ոլորտի արդյունավետության բարձրացման համար:

Առողջապահական համակարգի ֆինանսական կայունության ապահովման առումով ՀՀ-ում անելիքները դեռևս շատ են: Չնայած այն հանգամանքին, որ վերջերս նկատվում է առողջապահական պետական ծախսերի որոշակի աճ, այդուհանդերձ այդ ցուցանիշը դեռևս բավական հեռու է զարգացած երկրների համանման մեծությունից: Դրանով պայմանավորված էլ երկրի առողջապահության ընդհանուր ֆինանսավորման կառուցվածքում մեծ կշիռ ունեն գրպանից կատարվող ծախսերը, ինչն էլ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տվյալ մակարդակում շատ քաղաքացիների համար պարզապես անհասանելի է դարձնում պատշաճ առողջապահական ծառայությունների ստացումը:

Այս համատեքստում պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրումը ՀՀ-ում կարող է զգալիորեն բարելավել ոլորտի արդյունավետությունը՝

մեծացնելով ծառայությունների հասանելիությունը բնակչության լայն շերտերի համար՝ միաժամանակ նպաստելով առողջապահական համակարգի ֆինանսական խնդիրների կարգավորմանը:

Նման համակարգի մշակումն ու ներդրումը նախ և առաջ պահանջում է գիտական հիմնավորում՝ տնտեսության տարբեր ոլորտների և մի շարք գործոնների համապարփակ ուսումնասիրության վրա հիմնված: Հենց այդ խնդիրների մի մասի պարզաբանումներն էլ հանդիսացել են սույն ատենախոսության հենքը՝ պայմանավորելով դրա **արդիականությունն ու հրատապությունը:**

### **Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները**

Հետազոտությունը որպես հիմնական նպատակ հետապնդում է ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ձևավորման և ներդրման մեխանիզմների մշակումը: Ներկայացված նպատակի իրագործման համար ատենախոսությունում դրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- Հետազոտել բժշկական ապահովագրության սոցիալ-տնտեսական հիմնահարցերը,
- Դիտարկել այդ համակարգի փոխառնչությունը սոցիալ-տնտեսական ցուցանիշներին,
- Քննարկել և համեմատել առողջապահության ֆինանսավորման նպատակով կիրառվող մոդելները,
- Հետազոտել առողջության ապահովագրության դերը ոլորտի ֆինանսավորման կառուցվածքում,
- Ուսումնասիրել ՀՀ առողջապահական ոլորտի զարգացման ներկա վիճակն ու հեռանկարները,
- Վերլուծել ՀՀ առողջապահության ոլորտի հիմնական ցուցանիշները և վերհանել առկա խնդիրները,
- Իրականացնել պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման միջազգային փորձի և ՀՀ-ում դրա տեղայնացման հնարավորությունների վերլուծություն,
- Ներկայացնել ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման գիտական հիմնավորումները,



• Համապատասխան տնտեսամաթեմատիկական գործիքակազմի կիրառմամբ որոշել ՀՀ առողջապահական համակարգի դիրքը նախկին ԽՍՀՄ երկրների շարքում, գնահատել ՀՀ առողջապահական համակարգի արդյունավետությունը, հաշվարկել ապահովագրական սակագինը, ինչպես նաև կանխատեսել ապահովագրավճարի օպտիմալ չափը ՀՀ համար:

### ***Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը***

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

**Ներածությունում** հիմնավորված են հետազոտության արդիականությունը և ստացված արդյունքների գործնական ներդրման հրատապությունը, դրված է հետազոտության հստակ նպատակը, և նախանշված են դրանց իրագործման ուղիները:

Ատենախոսության առաջին՝ **«ՀՀ-ում բժշկական ապահովագրական համակարգի խնդիրներն ու զարգացման հեռանկարները»** գլխում մանրամասն անդրադարձ է կատարված բժշկական ապահովագրության սոցիալ-տնտեսական ասպեկտներին, դրա սահմանումներին, տարբեր երկրներում ներդրման փորձին և առանձնահատկություններին, ինչպես նաև ՀՀ առողջապահական ապահովագրության շուկայի ներկա վիճակին և զարգացման միտումներին:

Աշխատանքի երկրորդ՝ **«ՀՀ առողջապահական համակարգում պարտադիր բժշկական ապահովագրության ֆինանսատնտեսական գնահատականը և ներդրման արդյունավետության գործոնային և կլաստերային վերլուծությունները»** գլխում նախ իրականացվել է նախկին ԽՍՀՄ երկրների առողջապահական համակարգերի վարկանշում: Այնուհետև ռեգրեսիոն վերլուծությամբ գնահատվել է ՀՀ առողջապահական պետական ծախսերի ու համախառն հատուցումների ազդեցությունը հիվանդացության մակարդակի վրա: Հաջորդիվ գործոնային վերլուծությամբ ոլորտը նկարագրող 10 ցուցանիշները խմբավորվել են ըստ 3 փոփոխականի: Եվ վերջապես, գլխի վերջում կլաստերային վերլուծությամբ իրականացվել է նախկին ԽՍՀՄ երկրների խմբավորում՝ ըստ առողջապահության որակի:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման փնտրամաթեմատիկական գնահատման լուծումները» գլխում նախ իրականացվել է ապահովագրական սակագնի ակտուարական հաշվարկ, ապա Մոնտե-Կառլոյի իմիտացիոն մեթոդի և վեկտորական ավտոռեգրեսիայի կիրառմամբ հաշվարկվել է ապահովագրական վճարների օպտիմալ մեծությունը ՀՀ-ի համար:

**Եզրակացություններ և առաջարկություններ** բաժնում էլ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները:

### **Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը**

Ատենախոսի կողմից ներկայացված ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորոյթը կայանում են հետևյալում.

1. Առողջապահական ապահովագրության ոլորտի մի շարք գործոնների վերլուծությամբ որոշվել է պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման արդյունավետությունը:
2. ՀՀ առողջապահության ոլորտի 10 ցուցանիշների գործոնային վերլուծությամբ մշակվել են 3 ագրեգացված փոփոխականներ, որոնք հիմք են հանդիսացել համակարգի արդյունավետության գնահատման համար:
3. Իրականացվել է նախկին ԽՍՀՄ երկրների առողջապահական համակարգերի խմբավորում՝ հիերարխիկ և k-միջինների մեթոդներով կլաստերացման միջոցով, որի արդյունքում որոշվել է ՀՀ առողջապահական համակարգի դիրքը:
4. Հաշվարկվել է ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրավճարի օպտիմալ մեծությունը Մոնտե-Կառլոյի մեթոդի և վեկտորական ավտոռեգրեսիայի համադրման միջոցով:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ-ում առողջապահական քաղաքականության մշակման գործընթացում, մասնավորապես, պարտադիր բժշկական ապահովագրավճարի օպտիմալ մեծության որոշման հաշվարկներում:



## **Դիպողություններ արենախոսության վերաբերյալ**

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից կարևորվել են հետևյալները.

1. Խոսելով ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման հնարավորությունների և խնդիրների մասին՝ ցանկալի կլիներ, որ հեղինակն անդրադառնար նախորդ տարվա վերջին շրջանառության մեջ դրված և մեծ ռեզոնանս առաջացրած առողջության համապարփակ ապահովագրության նախագծին:

2. Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակն իրականացրել է կլաստերային վերլուծություն՝ փորձելով դասակարգել նախկին ԽՍՀՄ հանրապետություններն ըստ դրանց առողջապահական համակարգերի արդյունավետության: Կլաստերացման համար օգտագործվել են հիերարխիկ և k-միջինների մեթոդները: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը դիտարկեր կլաստերացման մեկ այլ մեթոդ ևս՝ երկքայլ կլաստերացումը, որն իրենից ներկայացնում է կիրառված երկու մեթոդների որոշակի հիբրիդ:

3. Հետազոտության երկրորդ և երրորդ գլուխներում հեղինակի կողմից կառուցված էկոնոմետրիկ մոդելների հիման վրա իրականացվել են ռեգրեսիոն վերլուծություններ, որոնցով փորձ է արվել գնահատել ՀՀ առողջապահության ոլորտի ֆինանսական գործոնների ազդեցությունը հիվանդացության մակարդակի վրա, ինչպես նաև կանխատեսել որոշ ցուցանիշների վարքագիծը ապահովագրավճարի հաշվարկի շրջանակներում: Ցանկալի կլիներ, որ աշխատանքում նշվեր ստացված գնահատականների վիճակագրական նշանակալիությունը, ինչպես նաև տրվեր որոշակի տնտեսագիտական մեկնաբանություն՝ մասնավորապես, մեկնաբանվեր, թե ինչու է առողջապահական պետական ծախսերի և համախառն հատուցումների աճը հանգեցնում հիվանդացության մակարդակի աճի:

4. Հետաքրքիր կլիներ նաև, եթե հեղինակը որոշ համեմատություններ անցկացներ իր կողմից հաշվարկված ապահովագրական սակագնի և ապահովագրավճարի օպտիմալ մեծության, ինչպես նաև համապարփակ ապահովագրության նախագծով առաջարկվող ցուցանիշի միջև:

## Եզրակացություն

Թվարկված դիտողությունները որևէ կերպ չեն ազդում հետազոտության արդյունքների վրա: Անուշ Լավրենտի Թումանյանի ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար որոշակի կարևորություն ունեցող խնդիրներ: Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 7 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Անուշ Լավրենտի Թումանյանի «Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի տնտեսամաթեմատիկական ցուցանիշների գնահատումը (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝**  
տնտեսագիտության թեկնածու

**Հ.Յ. ԱԴԻԼԻԱՆՅԱՆ**

Պարոն Հ. Ադիլխանյանի  
ստորագրությունը հաստատում եմ՝

13.08.2020

